

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

2020 թվականի դեկտեմբերի 28-ի խմբագրություն

STANDING ORDERS OF THE ASSEMBLY OF THE FOOTBALL FEDERATION OF ARMENIA

December 28, 2020 edition

Հոդված 1. Մասնակցությունը Ժողովին

1.
Ժողովում յուրաքանչյուր Անդամի անունից կարող է հանդես գալ մեկ Պատվիրակ և մինչև երկու՝ ձայնի իրավունք չունեցող ներկայացուցիչ: Որևէ անձ չի կարող ներկայացնել ՀՖՖ-ի մեկից ավելի անդամի: Քննարկումներին կարող են մասնակցել միայն Պատվիրակները:

2.
Պատվիրակի և ներկայացուցիչների անունները գլխավոր քարտուղարություն են ներկայացվում մինչև Ժողովի նիստի բացումը (գլխավոր քարտուղարությունն ամեն անգամ տեղեկացնում է Անդամներին ներկայացման վերջնաժամկետի մասին):

Հոդված 2. Նախագահ

1.
Որպես Ժողովի նախագահ հանդես է գալիս ՀՖՖ-ի նախագահը: Նախագահը կարող է Ժողովը վարելու լիազորությունները փոխանցել փոխնախագահին, Գործադիր կոմիտեի ցանկացած այլ անդամի կամ Գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը հանդես է գալիս որպես Ժողովի քարտուղար:

2.
Նախագահն ապահովում է, որ Ժողովն անցկացվի սույն Աշխատակարգի պահպանմամբ, բացում է և փակում Ժողովն ու քննարկումները, և, եթե այլ որոշում չի կայացվում Ժողովի կողմից, Պատվիրակներին տալիս է ելույթ ունենալու թույլտվություն և վարում բոլոր քննարկումները:

3.
Նախագահը պատասխանատու է քննարկումների ընթացքում կարգուկանոնն ապահովելու համար: Նա կարող է ձեռնարկել հետևյալ միջոցները Ժողովի քննարկումներին խանգարող ցանկացած մասնակցի նկատմամբ.

- ա) կարգի հրավիրել,
- բ) նկատողություն անել,
- գ) հեռացնել մեկ կամ մի քանի քննարկումներից կամ Ժողովից:

4.
Եթե նման միջոցի կիրառման դեմ բողոք է ներկայացվում, Ժողովը որոշում է կայացնում անմիջապես՝ առանց քննարկման:

Article 1. Participation in the Assembly

1.
Each Member may be represented at the Assembly by one Delegate, and up to two representatives, the latter with no voting rights. No one may represent more than one FFA member. Only the Delegates may take part in the debates.

2.
The names of the Delegate and the representatives shall be submitted to the general secretariat before the opening of the Assembly (the deadline for submission will each time be communicated by the general secretariat to the Members).

Article 2. Chair

1.
The President shall chair the Assembly. The President can delegate the powers of conducting the Assembly to the Vice President, any other member of the Executive Committee or the General Secretary. The General Secretary shall act as secretary of the Assembly.

2.
The chair shall ensure that the Assembly is conducted in strict compliance with these Standing Orders, open and close the Assembly and debates, and, unless the Assembly decides otherwise, grant Delegates permission to speak and conduct all discussions.

3.
The chair shall be responsible for maintaining order during debates. He may take the following action against any Assembly participant who disturbs the debates:

- a) a call to order;
- b) a reprimand;
- c) exclusion from one or more debates or Assembly.

4.
If an appeal is made against such action, the Assembly shall decide immediately without debate.

Հոդված 3. Հաշվիչ հանձնաժողով

Առաջին նիստի սկզբում ժողովը նշանակում է հաշվիչ հանձնաժողով՝ անդամների համարժեք թվով՝ ձայները հաշվելու և ընտրությունների համար տրված քվեաթերթիկները բաժանելու և հաշվելու հարցում Շնտրական կոմիտեին և/կամ Գլխավոր քարտուղարին օգնելու համար: Գործադիր կոմիտեի որոշմամբ քվեարկության արդյունքների ամփոփման համար կարող են օգտագործվել էլեկտրոնային սարքավորումներ:

Հոդված 4. Թարգմանիչներ

Ժողովին մասնակցող օտարերկրյա հյուրերի համար կարող են ներգրավվել պաշտոնական թարգմանիչներ, որոնք նշանակվում են Գլխավոր քարտուղարի կողմից:

Հոդված 5. Քննարկումներ

1.
Օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քննարկումներից առաջ ներկայացվում է կարճ զեկույց.

- ա) Գործադիր կոմիտեի նախագահի կամ այդ նպատակով նշանակված անդամի կողմից,
- բ) զեկույց տալու նպատակով Գործադիր կոմիտեի կողմից նշանակված կոմիտեի ներկայացուցչի կողմից,
- գ) այն Պատվիրակի կողմից, որի խնդրանքով այդ հարցը ներառվել է օրակարգում,
- դ) նախագահի կողմից նշանակված ցանկացած այլ անձի կողմից:

2.
Այնուհետև նախագահը հայտարարում է քննարկումը բացված:

Հոդված 6. Խոսնակներ

1.
Ելույթ ունենալու թույլտվությունը տրվում է ըստ դիմելու հաջորդականության:

Ելույթ ունեցողը կարող է ելույթ ունենալ միայն թույլտվությունն ստանալուց հետո: Խոսնակները ելույթ են ունենում ժողովի առջև՝ այդ նպատակով նախատեսված ամբիոնից:

2.
Ելույթ ունեցողը չի կարող երկրորդ անգամ ելույթ ունենալ նույն հարցի վերաբերյալ, մինչև չարտահայտվեն ելույթ ունենալու համար դիմած բոլոր մյուս Պատվիրակները:

Article 3. Scrutineers

At the beginning of the first session, the Assembly shall appoint an adequate number of scrutineers to count the votes and to assist the Electoral Committee and/or General Secretary in distributing and counting voting papers issued for the elections. The Executive Committee may decide to use electronic equipment to determine the results of a vote.

Article 4. Interpreters

Official interpreters can be appointed to make translations for foreign guests attending the Assembly. They shall be appointed by the General Secretary.

Article 5. Debates

1.
Debates on each item on the agenda shall be preceded by a short report:

- a) by the chair or a member of the Executive Committee designated for this purpose;
- b) by a representative of the committee designated by the Executive Committee to give a report;
- c) by a delegate that requested the item be included in the agenda;
- d) by any other person appointed by the chair.

2.
The chair then opens the debate.

Article 6. Speakers

1.
Permission to speak is granted in the order in which it is requested.

A speaker may not begin speaking until he has obtained permission to do so. Speakers shall address the Assembly from the rostrum intended for this purpose.

2.
A speaker may not speak for a second time on the same item until all other Delegates who have requested permission to speak have spoken.

Հոդված 7. Առաջարկներ

1.

Բոլոր առաջարկները ներկայացվում են գրավոր եղանակով: Այն առաջարկները, որոնք չեն վերաբերում քննարկվող առարկային, չեն ընդունվում քննարկման:

2.

Ցանկացած փոփոխություն պետք է լինի գրավոր և ներկայացվի գլխավոր քարտուղարությանը մինչև Ժողովի անցկացման օրը ՀՖՖ-ի Կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հոդված 8. Ընթացակարգային բնույթի առաջարկներ և քննարկումների փակում

1.

Եթե ընթացակարգային բնույթի առաջարկ է ներկայացվում, ապա հիմնական հարցի քննարկումը դադարեցվում է մինչև տվյալ առաջարկի մասով քվեարկության ավարտը:

2.

Եթե քննարկումը փակելու վերաբերյալ առաջարկ է արվում, ապա այն անմիջապես քվեարկության է դրվում՝ առանց քննարկման: Եթե առաջարկն ընդունվում է, ապա ելույթի թույլտվությունը տրվում է միայն այն Անդամներին, որոնք դիմել են ելույթ ունենալու համար մինչ քվեարկության անցկացումը:

3.

Նախագահը փակում է քննարկումը, եթե Ժողովը այլ որոշում չի կայացնում վավեր ձայների պարզ մեծամասնությամբ (ավելի քան 50%):

Հոդված 9. Քվեարկություն

1.

Գաղտնի քվեարկությամբ քվեարկությունն արգելվում է:

2.

Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ նախագահը կամ նրա կողմից նշանակված անձը բարձրաձայն կարդում է առաջարկի տեքստը և Ժողովին ներկայացնում քվեարկության կարգը (քվորում): Առարկությունների դեպքում Ժողովը որոշումը կայացնում է անմիջապես

3.

Ժողովին ներկա և քվեարկելու իրավունք ունեցող առնվազն 15 Անդամի պահանջով կարող է անցկացվել անվանական

Article 7. Proposals

1.

All proposals shall be submitted in writing. Proposals which are not relevant to the subject under discussion shall not be admitted to the debate.

2.

Any amendment shall be drawn up in writing and passed to general secretariat before the date of convocation of the Assembly in the manner prescribed by the Statutes of FFA.

Article 8. Procedural motions and closing of debates

1.

If a procedural motion is made, discussion on the main question shall be suspended until a vote has been taken on the motion.

2.

If a motion is made to close the discussion, it shall immediately be put to the vote without debate. If the motion is approved, permission to speak shall only be granted to those Member who have asked to speak before the vote was taken.

3.

The chair shall close the discussion unless the Assembly decides otherwise by a simple majority (more than 50%) of the valid votes cast.

Article 9. Votes

1.

Voting by secret ballot is prohibited.

2.

Before each vote, the chair, or the person designated by him, shall read the text of the proposal aloud and explain the voting procedure (quorum) to the Assembly. If an objection is raised, the Assembly shall decide immediately.

3.

Votes may be taken by roll call if requested by at least 15 of the Members present and eligible to vote.

քվեարկություն:

- 4.**
Ոչ ոք չի կարող պարտադրվել քվեարկության:
- 4.**
No one is compelled to vote.
- 5.**
Որպես կանոն, քվեարկությունն անցկացվում է ձեռք (քվեարկության քարտ) բարձրացնելու միջոցով կամ էլեկտրոնային սարքավորումների կիրառմամբ: Եթե ձեռք բարձրացնելու միջոցով հնարավոր չէ որոշել, թե արդյոք մեծամասնությունը կողմ է քվեարկել առաջարկին (հարցին) թե ոչ, ապա քվեարկությունն իրականացվում է այբբենական կարգով անունները կարդալու և դիրքորոշումը պարզելու միջոցով:
- 5.**
As a rule, votes are taken by a show of hands (voting cards) or by the use of electronic equipment. If it is not clear from a show of hands whether the majority has voted in favour of a motion, the vote shall be taken by calling the roll in alphabetical order.
- 6.**
Առաջարկները քվեարկության են դրվում ըստ դրանց ներկայացման հերթականության:
Երկուսից ավել հիմնական առաջարկի դեպքում դրանք քվեարկության են դրվում հերթականությամբ, և Պատվիրակները կարող են կողմ քվեարկել միայն մեկ առաջարկի համար:
- 6.**
Proposals shall be put to the vote in the order in which they are submitted.
If there are more than two main proposals, they shall be put to the vote in succession and the Delegates may not vote for more than one of the proposals.
- 7.**
Փոփոխությունների վերանայման առաջարկը քվեարկության է դրվում նախքան փոփոխությունները, իսկ փոփոխությունները՝ մինչև հիմնական առաջարկները:
- 7.**
Alterations to amendments shall be put to the vote before the amendments, and amendments before the main proposal.
- 8.**
Առաջարկները, որոնց դեմ ոչ ոք չի քվեարկել, համարվում են ընդունված:
- 8.**
Proposals without a vote against are regarded as having been passed.
- 9.**
Նախագահն ստուգում է քվեարկության արդյունքները և հայտարարում Ժողովին:
- 9.**
The chair shall check the result of the vote and announce it to the Assembly.
- 10.**
Ոչ ոք իրավունք չունի ելույթ ունենալ քվեարկության ընթացքում և մինչև արդյունքների հայտարարումը:
- 10.**
No one is permitted to speak during the vote and until after the result has been announced.

Հոդված 10. Ընտրություններ

- 1.**
Ընտրություններն անցկացվում են գաղտնի քվեարկությամբ: Դրանք անցկացվում են քվեաթերթիկների կամ ընտրությունների գաղտնիությունը երաշխավորող
- Article 10. Elections**

 - 1.**
Elections shall be carried out by secret ballot. They shall either be conducted with ballot papers or by using televoters, electronic vote counters that guarantee the

Էլեկտրոնային համակարգի միջոցով: Նախագահի ընտրությունները չեն կարող իրականացվել էլեկտրոնային սարքերի կիրառմամբ: Գլխավոր քարտուղարը հաշվիչ հանձնաժողովի և/կամ Ընտրական կոմիտեի անդամների օգնությամբ բաժանում և հաշվում է քվեաթերթիկները կամ բաժանում ու գնահատում քվեարկության համար նախատեսված էլեկտրոնային սարքերը:

2.

Բաժանված քվեաթերթիկների թիվը նախագահի կողմից հայտարարվում է մինչև հաշվարկը:

3.

Եթե հանձնած քվեաթերթիկների թիվը հավասար է բաժանված քվեաթերթիկների թվին կամ դրանից պակաս է, ապա ընտրությունները ճանաչվում են վավեր: Եթե հանձնած քվեաթերթիկների թիվը մեծ է բաժանված քվեաթերթիկների թվից, ապա քվեարկությունը համարվում է անվավեր, և անմիջապես անցկացվում է մեկ այլ քվեարկություն:

4.

Նախագահը հայտարարում է յուրաքանչյուր քվեաթերթիկի արդյունքը:

5.

Գլխավոր քարտուղարը դնում է հաշվարկված քվեաթերթիկներն այդ նպատակի համար նախատեսված ծրարների մեջ և անմիջապես կնքում դրանք: Ծրարները պահվում են գլխավոր քարտուղարությունում և ոչնչացվում վերջինիս կողմից Ժողովի ավարտից 25 օր հետո:

Հոդված 11. Մեծամասնության հաշվարկ

1.

Պարզ մեծամասնությունը (ավելի քան 50%) հաշվարկվում է ընտրությունների, քվեարկության և այլ որոշումների համար՝ հիմք ընդունելով հավաքած վավեր քվեաթերթիկների կամ էլեկտրոնային եղանակով տրված վավեր ձայների թիվը: Դատարկ քվեաթերթիկները, անվավեր քվեները կամ այլ կերպ ստացված էլեկտրոնային ձայները, ինչպես նաև «ձեռնպահ» քվեները հաշվի չեն առնվում պարզ մեծամասնությունը հաշվարկելիս:

2.

Բացարձակ մեծամասնությունը (ավելի քան 50%) հաշվարկվում է Ժողովին ներկա և քվեարկելու իրավունք ունեցող Անդամների

secrecy of the election. Elections of the President shall not be carried out by using televoters. The General Secretary, assisted by the scrutineers and/or the members of the Electoral Committee, shall conduct the distribution and counting of the ballot papers or the distribution and evaluation of the televoters.

2.

The number of ballot papers that have been distributed shall be announced by the chair before the count.

3.

If the number of ballot papers returned is equal to or fewer than the number of ballot papers distributed, the election shall be declared valid. If the number returned exceeds that of the ballot papers distributed, the vote shall be declared null and void and another vote shall be taken immediately.

4.

The chair shall announce the result of each ballot.

5.

The General Secretary shall put the ballot papers that have been collected and counted into envelopes intended for this purpose and seal them immediately. The general secretariat shall keep these envelopes and destroy them 25 days after the end of the Assembly.

Article 11. Calculation of majorities

1.

The simple majority (more than 50%) shall be calculated for elections, votes and other decisions on the basis of the number of valid ballot papers collected or the number of valid votes cast electronically. Blank ballot papers, invalid votes or electronic votes manipulated in any other way as well as abstentions shall be disregarded when calculating the simple majority.

2.

The absolute majority (more than 50%) shall be calculated on the basis of the number of Members present and eligible

թվի հիման վրա:

3.

Եթե ընտրությունների ժամանակ ընտրական փուլում Անդամը մեկ քվեաթերթիկի կամ էլեկտրոնային համակարգի միջոցով քվեարկում է մեկ թեկնածուի օգտին երկու կամ ավելի անգամ, կամ եթե քվեարկության ընթացքում Անդամը երկու կամ ավելի անգամ է քվեարկում նույն հարցի համար, ապա միայն վերջին քվեն է համարվում վավեր և հաշվարկվում:

Հոդված 12. Ուժի մեջ մտնելը

Ժողովի սույն աշխատակարգը ընդունվել է Հերթական Ժողովի կողմից Երևանում 2020 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտնում ընդունելուց անմիջապես հետո:

Երևան, 28 դեկտեմբերի 2020թ.

to vote.

3.

If during an election the Member casts two or more votes in support of one candidate on one ballot paper or through an electronic vote counter in an election round, or if during a vote the Member casts two or more votes for the same matter, only the last vote cast shall be considered valid and counted.

Article 12. Enforcement

These Standing Orders of the Assembly were adopted by the Ordinary Assembly in Yerevan on December 28, 2020 and come into force immediately after adoption.

Yerevan, 28 December 2020